

**Համաշխարհային բանկի Պարտականությունների կատարման գծով
խորհրդականի/ Օմբուդսմենի ապարատին (CAO)
ՀՀ Վայոց ձոր մարզի Գնդեվազ գյուղի բնակիչներից**

Դիմում-բողոք

Նկատի առնելով ոսկու արդունահանման՝ առավել ևս բաց եղանակով արդյունահանման և ցիանային հարթակի բացասական վտանգները շրջակա միջավայրի և տեղի բնակչության՝ հանձինս Գնդեվազ գյուղի համայնքի, ՀՀ Վայոց ձորի մարզի Գնդեվազ գյուղի բնակիչները դիմում են ԱՀ ՀՀ կառավագական օրենսդրության կազմության՝ առաջարկությունը համապատասխան աշխատանքների բացասական հետևանքները հետախուզական աշխատանքների բացասական հետևանքները:

- Մեր գյուղատնտեսական ապրանքները դժվարությամբ են իրացվում շուկայում, -անասունները Ամուլսարի ազդեցության գոտուց բերված անասնակերը չեն ուտում, -Գնդեվազում կայացած հանրային լսումների ժամանակ Ամուլսարի հանքավայրի շահագործման դեմ կարծիքները չեն արձանագրվում, -միջազգային նորմերին չհամապատասխանող, երկու կիլոմետր հեռավորության վրա նախագծով կառուցվող ցիանային հարթակը իր կործանարար ու մահաբեր հետեւանքները կունենա թե Գնդեվազի շրջակա միջավայրի, և թե Գնդեվազի բնակչության վրա:

Մենք՝ Գնդեվազ գյուղից Ամուլսարի հանքավայրում աշխատողներս, արդեն իսկ տուժել ենք հանքավայրում աշխատելու ընթացքում՝ չստանալով համապատասխան բժշկական օգնություն և հետազոտություն:

«Գեղթիմ» կազմակերպությունը մանիպուլիացիայի է ենթարկում գնդեվազիներին՝ ասելով, որ իրենց հողատարածքները կգնահատվեն շատ բարձր գներով, վաճառքից ստացված գումարով կկարողանան գնել բնակարան Երևանում և հանրապետության այլ տարածքներում և կտեղահանվեն:

Գեղթիմ կազմակերպությունը իր գործը առաջ տանելու համար շրջանառում է բնակչությանը խաբելու ցանկացած միջոց, այդ թվում հավաքում է գյուղացիների հողերի սեփականության վկայականները, իբր չափագրումները իրականացնելու համար, բայց վերջինս խարկանք է և նպատակը ակնհայտ է:

Ամուլսարի ոսկու հանքավայրի շահագործման ընթացքում, պայթեցումներ կատարելու հետևանքով ծանր մետաղների փոշին կտարածվի զյուղի արոտավայրերի, խոտհարքերի, արտերի, ինչպես նաև զյուղիբնակելի տարածքի վրա: Անկախ փորձագետների հավաստմամբ, կբարձրանա ռադիոակտիվ ֆոնի մակարդակը:

Մեր իրավունքների խախտումը տեղի է ունենում IFC և EBRD-ի հովանավորչությամբ: Գեոթիմ կազմակերպությունը ոչ իրավական ձանապարհով է հարցերը լուծում և այն բնակիչները, ովքեր չեն պատրաստվում Գնդեվազը լրել, կամ ստիպված են իրենց հողերը վաճառել, դառնում են այս մանիպուլացիայի զոհերը: Մենք՝ Գնդեվազ զյուղի ներքոստորագրող բնակիչներս, կտրականապես դեմ ենք Ամուլսարի հանքավայրի շահագործմանը և Գնդեվազի հարակից տարածքում ցիանային հարթակի կառուցմանը: Մենք պահանջում ենք IFC-ից դադարեցնել այս հանցավոր ծրագրի ֆինանսավորումը, քանի որ այն մեծ վտանգներ է պարունակում Գնդեվազի բնակչության համար: Մենք պահանջում ենք հաշվի առնել մեր կարծիքը և չխախտել մեր իրավունքները: